№ 174 Սեպտեմբերի 19 (Հոկտեմբերի 1) 1881 Սեպտեմբերի 19 (Հոկտեմբերի 1) № 174

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին հասարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարաթարթարացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայ-կաթոլիկները Թիւրքիայում։ Գերմանիա։ Ֆրանսիա։ Եգիպտոս։ Թիւրքիա։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ԾԱՆՈՒԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Կալուածական խնդրի առիթով մի քանի նկատողութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԲԱԳՈՒՒԻՑ մեզ գրում են, «Կրասիլնիկեանների այրված հորերի, բացի այրված նաւթից փրկացած մանրնաների և արած ծախսերի վնասը հանում է, ինչպէս ասում են, մօտ 30,000 ռուբլ գումարի։»

—

Պ. Արել Ապրէսեանց, որ այժմ Բագուի մէջն է, այս օրերս սկսել է հանգանակութիւն հաւաքել յօգուտ «Փուրնալ դ'Օրիան» լրագրի։ Պարոնը արդէն հաւաքել է 50 ռուբլ այդ նպատակով։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են, «Ահա մօտ երեք շաբաթ է, որ «Մշակը» շաբաթը մի անգամ ենք ստանում, փոխանակ առաջվայ երկու անգամի։ Ամբողջ շաբաթվայ համարները միանգամից ենք ստանում կիրակի օրը։ Արդեօք չէր կարելի խնդրել փոստային վարչութեան որ շաբուտնակէր, ինչպէս առաջ, շաբաթը երկու անգամ ուղարկել «Մշակը»։ Բացի սորանից վերջին ժամանակները այստեղի փոստատանից էլ սկսեցին լրագիրների համարները կորչել։ Ինչպէս երեսում է այդ համարները վեր են առնում այդպէս անուանված մ ո ւ ֆ թ ա ղ գ ա ս է ր ն ե ր ը, որոնց թիւը, գոհութիւն Աստուծու, մեզ մօտ էլ քիչ չէ։ Իսկ տեղիս փոստային պ. վերտեսչին կը խնդրէինք աւելի ուշադրութեամբ վարվել բաժանորդների հետ և ոչ թէ ժամերով սպասել տալ նրանց փոստատան դռների առաջ, անդադար ասելով՝ «ժամանակ չէ», «ուշ է», «անկարելի է», և այլ այս տեսակ խօսքեր։ Դժբաղդաբար լրագիրները բաժանվում են առաջին հանդիպողին, իսկ իսկական բաժանորդները չատ անգամ իրանց թերթը չեն ստանում։»

—

Թիւրքիայից մեր քաղաքը եկող հայ մշակները, որոնք գալիս են այստեղ բանելու մինչև այժմ տոմսակ (բիլէտ) ստանալու համար վճարում էին 1 կամ 2 ռուբլ, իսկ այժմ թիւրքաց հիւպատոսը սկսեց պահանջել իւրաքանչիւրից 6 ռուբլ, նրանց տոմսակ տալու համար։ Եւ որովհետև խեղճերը այդքան փող վճարել չեն կարող հիւպատոսը նրանց մասին զանգատվում է պօլիցիային և բռնել է տալիս նրանց։ Այս բոլորիս բազմաթիւ հայ թիւրքիահպատակ մշակներ բանտարկված են Թիֆլիսում, որովհետև չեն կարող վճարել պահանջած գումարը։ Ցնծելով որ անենարին է այստեղ բանել, խեղճերը խնդրում են արձակել նրանց, որ կարողանան վերադառնալ իրանց հայրենիքը։ Բայց հիւպատոսը պահանջում է որ նախ վճարեն փող, և ապա գնան։ Այդ մշակներից մի մեծ խումբ, որոնք դեռ բռնված չեն, եկան մեր խմբագրութիւնը խնդրելով մեզ որ մենք օգնենք նրանց։ Բայց մենք ինչ կարող ենք անել, բացի իրողութիւնը տրատարակելուց։

—

Այս օրերս Թիֆլիսում գտնվող պ. Արշինարի մեքենի մագազինի կառավարիչ, երիտասարդ պ. Ֆագէ անձնասպանութիւն գործեց։ Անձնասպանութեան պատճառը անյայտ է։

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են, «Օգոստոսի 30-ին տեղիս դեղատան մէջ ծառայող Սէրգէյ Բոդէ գործեց անձնասպանութիւն իրան թունաւորելով։ Անցեալ տարի էլ նոյն դեղատան մէջ մի այլ ծառայող փորձ փորձեց իրան թունաւորելու, և այն ժամանակ պ. Բոդէ փրկեց նրան հայտատ մահից։ Իսկ այժմ ինքն պ. Բոդէ իրան թունաւորեց։ Նրան թաղեցին առանց քահանայի։»

—

Սղնախից մեզ գրում են որ 29-ին օգոստոսի կարկուտ է եկել Սղնախի մերձակայ գիւղերում, մանաւանդ Ախաչէն և Մուկուզան գիւղերում, որոնք գոված են իրանց ընտիր գինիներով։ Այս տարի գինին չատ սակաւ կը լինի, ասում է թղթակիցը։

—

Լսում ենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներից մին, բժիշկ Ա. Բարայեան առաջարկել է հոգաբարձական ժողովին վերցնել որդեգրութիւնը, այսինքն գիշերօթիկ աշակերտների փոխանակ, պահել երեխեկ ստիպենդիաներ։ Ուռաջարկութեան պատճառն է, որ որդեգիրների մէջ տիրապետում են միշտ այլ և այլ հիւանդութիւններ։

—

Ղարսից մեզ գրում են հետեւեալը։ «Պ. պ. Ղազարեանի, Կաճկաճեանի և Տէր-Յարութիւնեանցի եռանդոտ գործունէութեան շնորհով այստեղի հայ հասարակութիւնը կարեորութիւն է զգում աշխատել ազգային գործերը առաջ տանելու։ Դեռ Երեան, Ալէքսանդրապոլ, նոյնիսկ Կովկասի մայրաքաղաք, հարուստ Թիֆլիս յօգուտ թիւրքաց հայերի օտար պետութեանց առաջ պաշտպան հանդիսացող Վիկտորիայի լրագրի 50 ռուբլ էլ տուած չեն, Ղարս քաղաքը արդէն 413 ռուբլ է տուել նոյն նպատակին։ Բացի միւսներ երեք պարոններից մի խումբ երիտասարդների առաջինների հետ միացած, ամենայն ներդաշնակութեամբ միասին գործում են ազգային գործերում։ Սրանց ժրջան և տակուն աշխատութեան շնորհով մեր դպրոցները առաջ են գնում և այժմ կարելի է ասել որ Ղարսի հայոց դպրոցները օրինակելի դպրոցներ են։ Ցուսանք որ միշտ համաձայնութեամբ կը գործեն։ Ազգանանց Գրիգորիս եպիսկոպոսը ամենից սիրված և յարգված անձ է։ Բայց ցաւալի է որ Ս. վարդապետ Շիրակացու մասին նոյնը չենք կարող ասել։ Սա իր անտակ և անարդար վարմունքով ամեն տեղ խռովութիւն է գցում։»

—

Մեզ գրում են Ղ.ԱՐՍԻՑ և հետեւեալը։ «Մեր կողմերը երկրի պտղաբերութիւնը թէև չատ առատ էր, սակայն վերջին ժամանակները երեսացաւ դաշի մուկը, որ մեծ վնասներ տուեց բերքին։ Կան երկրագործներ, որոնք գրեթէ ոչինչ չը ստացան իրանց արտերից։ Երեսեցաւ նոյնպէս մորեխ, բայց վնաս չը կարողացաւ տալ, որովհետև նրա հետ լոյս ընկաւ մի տեսակ թռչուն, որ սատիկ կոտորում էր վնասակար միջատներին։ Այն երկրագործը, որ այս տարի յոյս ունէր իր արտերից ստանալ 150 սօմար, հազիւ 70 սօմար ստացաւ։ Իսկ կատաւ ցանողները հազիւ այնքան ստացան, որքան ցանել էին։ Զը նայելով այսքան անպտղութեան, դարձեալ առաջին տեսակի ալիւրի պուդը ծախվում է 1 ր. 20 կոպէկով։»

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Մշակը» զարթեցրեց կալուածական խնդիրը, և կամենում է մշակել, արծարծել այդ խնդիրը և հիմնաւոր եզրակացութիւն գուրս բերել նրանից։ Շնորհակալ ենք ձեր լրագրից, որ նա միշտ նպատակ ունի ազգի չաներին պաշտպան հանդիսանալու, տկարներին զօրեղների դէմ պաշտպանելու։ Այստեղի հասկացող մարդիկ չատ բաներ կարող էին հաղորդել այդ խնդրի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԻԹՈՎ ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

--

I

Հրաւիրում ենք ընթերցողին աչքի անցնելու հետեւեալ մի քանի թիւերը, որոնք վերաբերում են գիւղական հողաբաժնի մեծութեանը թիւերի հետ գործ ունենալը՝ երբեմն չատ ձանձրալի է, բայց երբ նրանք փոքր ի չատէ ճշգրտութիւն ունեն, խնդրի պարզելուն և բացայայտելուն չատ են նպաստում։

Նորերս դուրս եկաւ Սեմեոնովի մի անտեսական տեսութիւնը, որ վերաբերում է ռուս կենտրոնական 8 նահանգներին։ Այդ նահանգների մէջ գիւղացիները համաչաւասար հողաբաժին չեն ստացած ամենքնքեան։ Մէկը ունի աւելի մեծ, միւսը աւելի փոքր հողաբաժիններ։ Այժմ, հետաքննելով գիւղացու տնտեսական դրութիւնը, դուրս է գալիս, որ մի և նոյն համամատութեամբ մի տեղ նա լաւ է ապրում, միւս տեղ ընդհակառակն թշուառ։ Մէջ բերենք այն թիւերը, որ յայտնի են այդ նահանգների գիւղական ազգաբնակութեան բազմանալու մասին 20 տարվայ միջոցում։

Մինչ 1 դեսեատին հող ունեցողը բազմացել է..... $16_{,6}$%
2..... $17_{,3}$%
3..... $19_{,}$
4..... $21_{,2}$
5..... $25_{,4}$
6..... $27_{,6}$
6-ից աւելի..... $30_{,3}$%

Ուրեմն որչափ մեծ է գիւղացու հողաբաժինը, այնքան աւելի էլ աճում է սմբողջ ազգաբնակութիւնը այդ նահանգներում։ Մի դեսեատինից պակաս հող ունեցող ազգաբնակութիւնը համարեա 2 անգամ աւելի ծանր է բազմանում, քան 6-ից աւելի ունեցողը։ և մի և նոյն ժամանակը այն և այս ազգաբնակութիւնը իրանց կողմնածքի և առողջութեան կողմից ես բաւականին զանազանվում են։ (Եւ միշտ նկատենք, որ դեսեատինան ընդունված է հոգու վրա հաշված-դուշա)։

Շատերը ասում էին և այժմ ես ասում են, այդ վնաս չունի, որ գիւղացին քիչ հող ունի։ նա կարող է իր ապրուստը հայթայթել և ուրիշ մասնաւոր պարապմունքներ ունենալով։ Առաջ բերած թիւերը ընդհանուրը հաստատում են, որ ամբողջ մեծ գիւղական ազգաբնակութեան վիճակը չէ կարելի հիմնել պատահական և անորոշ պայմանների վրա։ Իսկ լաւ յայտնի է, որ գիւղացուն քիչ հողաբաժին տուողները հէնց այդպէս էլ արդարացնում էին իրանց վարմունքը։

Շարունակենք այդ թիւերից մի քանի ուրիշ եզրակացութիւններ ես հանելու։ Եթէ մի դեսեատին հող ունեցող ազգաբնակութեան համեմատ առնենք 2 դեսեատին ունեցողների բազմանալը, յետոյ այս վերջինների համեմատ առնենք 3 դեսեատին ունեցողների բազմանալը և այլն—այն ժամանակ կը ստանանք հետեւեալ թիւերը. $4_{,21}$%, $10_{,25}$, $13_{,31}$, $25_{,24}$, $13_{,24}$ և $16_{,26}$%։ Ուրեմն 2 դեսեատինական հողաբաժինը դեռ քիչ ազդեցութիւն ունի ժողովրդի աճման վրա համեմատած մի դեսեատինականի հետ—միայն $4^{4}/_{5}$%։ Բայց 3 և 4 դեսեատինականները արդէն սկսում են ազդել նկատելի։ Կերպով $10^{1}/_{4}$ և $13^{1}/_{3}$%,—Իսկ ինչ վերաբերում է 4—5 դեսեատինական հողաբաժնի ազդեցութեանը՝ դա այնքան նշանաւոր է, որ առաջվայ թիւերը բոլորը նսեմանում են և յիրաւի ազգաբնակութիւնը մեծանում է $25^{1}/_{4}$% (համեմատած 3—4 դես. հողաբաժին ստացողների հետ)։ Այդ կէտից սկսած թէև հողաբաժնի աւելի ես մեծ լինելը ազդում է գիւղական ազգաբնակութեան աճումը անբաւական աւելի ես բազմանալուն վրա։ բայց ոչ այնքան սաստիկ զանազանութեամբ։

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ այդ նահանգներում 4 դեսեատինից պակաս հողաբաժին ստացող ազգաբնակութեան աճումը ճնշված է միայն արտաքին հանգամանքների շնորհով։ Երբ գիւղը ստանում է 4—5 դես. հողաբաժին, նրա աճելուն արգելք դնող կապերը թուլանում են։ այսինքն ծնողների թիւը շատանում է, մանչողներին պակասում և այլն։ Դրանից յետոյ աւելացրած հողը, ինչպէս երեւում է այդ թիւերից, արդէն ազդում է ոչ այնքան ազգաբնակութեան աւելի ես արագ բազմանալու վրա, որչափ նրա նիւթական աւելի ապահովութեան և աւելի հարուստ կենցաղավարութեան վրա։

Քիչ հողաբաժին ունեցող գիւղացիները այն կարգինն են, որ պատկանում էին կալուածատէրերին։ Դրանք զրկեցին գիւղացուն հողից և այդ նահանգներում նախկին կալուածատիրական գիւղացիներից միայն մի չատ աննշան մասը—$^{1}/_{24}$-ը ստացաւ. մօտ 5 դեսեատինական հողաբաժին, մինչդեռ տէրունական գիւղացիներից համարեա $^{2}/_{3}$ մասը։ Բայց որովհետև վերջիններս թիւը, համեմատած առաջինների հետ չատ պակաս է, ուստի և գիւղական ազգաբնակութեան մեծամասնութիւնը ($^{2}/_{3}$) անապահով դրութեան մէջ է։

Իսկ սեփական ճանապարհորդութիւնները՝ ինձանմեն տեղ նոյնպէս ապացուցանում էին, որ բազմանող գիւղացիները միշտ աւելի ապահովված են և աւելի կանոնաւոր կերպով են բազմանում ու զարգանում։ Ճիշդ է Մոսկվայի և Պետերբուրգի նման խոշոր արդիւնագործական կենտրոնները, երբեմն տալիս են չահաւէտ պարապմունքներ այս և այս գիւղի բնակիչներին, բայց ընդհանուր գիւղական երեսոյթներ քննելու ժամանակ՝ դրանց նշանակութիւնը դառնում է—համեմատած հողի ապահովութեան հետ—անչնչաւոր—Այն բազմահող գիւղերում, որոնք ընկած են վ.օլոգոդսկից և Նովգորոդսկից նահանգների (հարաւային) սահմաններում, գիւղացիները ունեն աւելի հաց, աւելի տնային անասուն, աւելի լաւ կենցաղավարութիւն։ Ունենալով այդ բոլորը՝ նրանք աւելի ինքնուրոյն բնաւորութիւն ունեն, աւելի ինքնասիրութիւն և թոյլ չեն տալիս հեշտ կերպով իրանց հարստահարելու և նեղելու։ Նրանց դրացիները, ընկած լինելով մի սակաւահող և երբեմն անբերի երկրի վրա, առաջին տեսքից արդէն իրանց զանազանել են տալիս առաջիններից։ Փոքր հասակով թէ իրանք և թէ իրանց անասունները, անկարող ապահովել երկրի արդիւնքով ամենագլխաւոր պիտոյները, մշտական ընկճված դրութիւն—ահա երկրորդ կարգի գիւղական դրութեան պատկերը։ Երբեմն հարեան երկու գիւղերի մէջ—միայն մեծ և փոքր հողաբաժին ստանալուց—այնպէս մեծ զանազանութիւն է նկատվում, որ կարծես զանազան գաւառների հետ գործ ունես և ոչ թէ հարեան գիւղերի հետ։

II

Պատմում այս տարվայ մի անցք Ռուսաստանի կեանքից։ Ամենքը լիշում են, որ անցեալ ձմեռ սատիկ հացի թանգութիւն էր Ռուսաստանում։ Նոյնպէս գուցէ յայտնի է, որ մեծ կապիտալ ունեցող հացավաճառները մեծ պաշարներ ունէին ժողված, և ուժգնի գնով ձեռք բերած հաց ու ալիւրը ծախում էին թանգ գնով։ Հացը այնքան սկսեց թանգանալ, որ մի քանի վաճառականներ սկսեցին պաշարները աւելի ես մեծացնել և այս ու այն կողմից ալիւր ձեռք բերել

մասին։ Բայց ափսոս որ մեր գաւառական թղթակիցները լռում են և չեն աշխատում մանրամասնաբար տեղեկութիւններ տալ «Մշակին» որպէս զի սա փոքր առ փոքր մշակի և պարզի հարցը։»

—

ԱՇՏԱՐԱԿԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարի մեր գիւղում մի պակ պէտք է կատարվէր, բայց Լէմմանից արգելվեցաւ չբնաս համարվելու համար։ Այժմ, լսում ենք, որ այդ պակը գլուխ բերեցին շնորհիւ մի քանի հարիւր բուրլ գումարի, որ ուղարկվեցաւ Մանկուեանն և Պոտիփանի աղային։ Համարձակվում ենք Վեհափառ Կաթողիկոսի ուշադրութիւնը դրաւիրել այս զեղծումների վրայ։»

—

ԲԱԳԻՇԻՑ մեզ հաղորդում են որ այս տարի պատրաստվում են այդ քաղաքի մի քանի խելացի երիտասարդներ բարեգործական նպատակով թատրոնական նրրկայացումներ տալ։

—

Մեզ հաղորդում են Բաղուից որ սրանից մի քանի ամիս առաջ այդ քաղաքում վախճանվեցաւ պ. Դուլգաչենանց, որ փաստաբան էր։ Ասում են որ նա թողել է մի ձեռագիր զբրուած «Պանդուխտ» անունով։ Թղթակիցը խորհուրդ է տալիս այդ գրուածքը ուղարկել «Գիրքերի դրատարական» Թիֆլիսի հայոց ընկերութեանը, որպէս զի այդ ձեռագիրը քննվի և եթէ արժանի է տպագրութեան, մեր միւս ցիրուցան եղած գրուածների պէս չանհետանայ։

—

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան պ. պ. անդամները հրաւիրվում են ներկայ գտնվել հերթական ընդհանուր ժողովին սեպտեմբերի 20-ին երեկոյեան 7½ ժամին գիւղատնտեսական ընկերութեան բնակարանում Ալեքսանդրեան այգու մէջ։ Պարապմունքի առարկաներն են. ապաստարան շների համար, Պավլովի բեռիարը կենդանիների հովանաւորութեան գերմանական ընկերութիւնների գործունէութեան մասին, նոյնը Զեհկովիչի կենդանիների հովանաւորութեան Բրիւսելի ընկերութեան գործունէութեան մասին, պ. Մամիկօնովի Նիւբրի ընկերութեան մասին և ընկերութեան մէջ կանանց մասնաժողով հիմնելու մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

Մեր Կաթոլիկ ազգայնոց գործերը՝ Գեր. Ազարեանի պայծառ խոստումներուն հակառակ՝ նորէն կնճռոտվել սկսած են։ Դրժգոհութիւնը՝ նոյն իսկ Հասունեան կուսակցութեան մէջ ծաւալելով, Գեր. Ազարեանի Պատրիարքական ընտրութեան օրինաւորութիւնն իսկ կը ժխտուի։ Ընտրութիւնը պարզապէս մեքենայութեանց արդիւնք է կ'ըսեն. Մայրաքաղաքէս ասած անտի հաւաքեալ քանի մը հարիւր քուէ, նոյնպէս ամիսներ առաջ գաւառներէն բերելով տրուած և ասպարիսուած քանի մը քուէներ, Գեր. Ազարեանն յաթոռ պատրիարքութեան բարձրացուցած են ապօրէն և անկանոն կերպիւ։

Վարչական խորհրդոյ անդամց ընտրութիւնն ալ ոչինչ նուազ ապօրէն և անկանոն կերպիւ կատարուած է կըսեն. ընտրողներէն ոմանք, որք Պատրիարքական ընտրութեան չէին մասնակցած, այն է Յօհաննէս էֆէնտի Զամշեան, Միքայէլ էֆէնտի Բորթուքալեան և Յօհաննէս էֆէնտի Սարգիսեան, անմիջապէս հրաժարական տուած էին, ընտրեալներէն ոմանք ալ անցեալ ուրբաթ օրը՝ փոթորկալից նստէ մ'զկիր՝ հրաժարական տուած են։ Այս վերջիններն են, նոյն իսկ Պատրիարքին եղբայրն Արիստակէս էֆէնտի Ազարեան, Յօհաննէս էֆէնտի Ալլահվէրտեան, Օնոիկ պէյ Մըսըրլեան և Եավէր փաշա Թէնկեան, որք՝ ինչպէս յայտնի է՝ վերոյիշեալ երեք հրաժարկոց հետ Հայ Կաթոլիկի հասարակութեան ամենէն ընտիր և նշանաւոր անձնականութիւններն են։

«Սթամբուլ» լրագիրն՝ իւր երէկուան թուով այս խնդրոյն վրայ հրատարակած խորհրդածութիւնն հետևեալ տողերով կը վերջացնէ։

«Պատրիարքին անձնականութիւնն առաջին տեղին բռնած է այս վէճի մէջ, ինչպէս Հասունեան վէճին մէջ, որ իսպառ մոռցուած կը կարծուէր։

«Ամէն բան համաձայնութեան կոչին էր. անձ մը միայն կրնար արգելք լինել այդ համաձայնութեան. և ահա ճշդիւ այն է որուն թոյլ տրուեցաւ Պատրիարքական գահը նստիլ։

«Գեր. Ազարեան, իւր երկնաւոր տիրոջը պէս, և այս է իւր միակ բաղդաւորութեան կէտը քրիստոնէութեան հիմնադրին հետ, նոյն իսկ իւր ազգատոհմին մէջ հակառակորդներ գտաւ։

«Ոչ ոք կրնայ ուելի լաւ գնահատել զոր, քան թէ նոքա մերձաւորներն։»

«Սթամբուլ» իւր երէկուան թուով կ'ըսէ թէ Հայ-Կաթոլիկ հասարակութեան մէջ նորէն տարաձայնութիւնը սկսած են։ Ինչ որ արդէն զուշակելի էր, շուտով իրականացած է։ Ազարեան Սրբազանի բացարձակ իշխանութիւնն այնպիսի կերպիւ մը կը սկսի երևան գալ, որ Հասունեանի աներոտմամութեան այն գեղեցիկ (?) օրերը մոռցման մէջ կը թողու։ Նոր կարդինալին ստացած պատիւներն անհանգստութիւն կը պատճառեն Ազարեան Սրբազանին, որ գայն գերազանցել կ'ուզէ, ուստի ուրբաթ օրը Պատրիարքը չը կրցաւ այլ ևս ինքզինքը զսպել, որով ազգային խորհրդոյ անդամց մեծ մասն հրաժարեցան, և հասարակութեան երևելիները բոլոր բարձին Պատրիարքին չափազանց պահանջմանց և մեքենայութեանց դէմ։

(Մասիս)

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական լրագիրները հաւատացնում են, որ կայսրների տեսակցութեան ժամանակ Դանցիգի մէջ ոչ թէ գաղնակցութիւն, այլ համաձայնութիւն է կայացել։ Պաշտօնական «Corresp. Provinz» հաւատացնում է, որ այդ համաձայնութիւնը կարգացնէ եւրօպական խաղաղութիւնը և միջոց կը տայ կառավարութիւններին ամբողջապէս նուիրվել ներքին գործերին և խնդիրներին։ Եթէ ճշմարիտ կայսրների տեսակցութեան հետևանքը այդ է եղել, ուրեմն զանազան կողմերից յայտնված երկիւղը ոչինչ նշանակութիւն չի ունենայ։ Մեծ ժողովուրդները մոռնալով միմեանց իրանց թագաւորների միջնորդութեամբ այնքան շատ ներքին գործեր ունեն, որ դաշնակցութիւններ չեն կապի արտաքին կողմնակի նպատակների համար։ Ժամանակից է այժմ մի բարերար կարգադրութիւն մեր գիւղացիների վերաբերմամբ— նրանց հողաբաժինները յետ գնել տալը կալուածատիրոջից։ Կարգադրութիւնը վերին ատիճանի խելացի է, գիները շատ չափաւոր։ Ոռոգանվող և պարտիզային հողերը գնահատված են դեսեատինը 26 բուբլի, իսկ չոռոգանվողները 17 բուբլի և պակաս։ Մի խօսքով դա մի մեծ բարիք է գիւղացիների համար։»

Այս տողերից ցնցերցողը կը նկատի նախ ինչ է նշանակում փոքր ի շատ համակրել ժողովրդի ընդհանրութեանը։ Միւս կողմից նա կը նկատի, որ կալուածական խնդիրը յարուցված է ոչ միայն Երևանեան, այլ և միւս նահանգներում, թէև մինչև այժմ մեր լրագիրների թղթակցութիւնները այդ մասին ոչնչչ չեն հաղորդում։ Զարմանալի հասարակական անտարբերութիւն։ Նոյնպէս թղթակցութիւններ չերեցան մինչև այժմ Նախիջևանի մօտ կատարված փնալալայ խանի իր գիւղերի հետ առանձին կարգադրութիւնների մասին։ Նա, կարծեմ, իրանից կախված բոլոր գիւղերը յանձնել է տերութեան և դրա փոխարէնը ստանում է տարեկան մի նշանաւոր վարձաբերութիւն։ Իմ ունեցած տեղեկութիւնները հարուստ չեն, որ ես կարողանայի ճիշդ հաղորդել մանրամասները—բայց կարելի է կարծել, որ դա գիւղական հողաբաժին յետ գնել տալու մի օրինակն է։

Կռվասում հողի պտղաբերութիւնը մեծ կախումն ունի ոռոգանելու ջրից։ Կարելի է անապատ դարձնել ամբողջ ծակած երկիր, զրկելով նրան միայն ջրից։ Այդ պատճառաւ պէտք է հողաբաժին յետ գնելու ժամանակ՝ մեծ ուշք դարձված լինի ջուր բաժանելու իրաւունքի վրա. պէտք է այնպէս կարգադրել, որ յետոյ տարաձայնութիւններ և չարգործութիւններ տեղի չունենան գիւղացիների թէ միմեանց մէջ և թէ դէպի կալուածատէրը։ Վերև բերած տողերից ակնյայտ է, որ ոռոգանվող և չոռոգանվող հողերի գնահատութեան մէջ զանազանութիւն է դրված արդէն. բայց հարկաւոր ենք հանրամատ նկատել, որ այնտեղ լիլված 25 և 17 բուբլին պատկանում են միայն նահանգի մի մասին, միւս մասներում գուցէ նրանք զանազանվում լինեն։

Մենք մոռացութիւն չունենք այստեղ թէել բոլոր այն հետաքրքրական խնդիրները, որոնք պէտք է լրագրական թղթակցութեան, հասարակական քննադատութեան նիւթ լինէին այս բոպէին։ Մեր նպատակն է, պարզելով կամ քննելով խնդրի մի որ և է կողմը— ցոյց տալ և ընդհանուրի քննադատութեան կարևորութիւնը։ առ այժմ այս կարելի է միայն, քանի որ նիւթ չունենք թատրերական համար, իսկ եղած տեղեկութիւնները կցկտուր են։ Զորօրինակ. ինչ կերպ պէտք է կարգադրվեն և յետ գնվեն ամբոնցի արօտատեղիները (եյլաղ). ինչպէս պէտք է գնահատվեն գիւղից շատ հեռու ընկած նրա սեփական հողերը, որոնք նոյն իսկ այդ հեռու լինելու պատճառով վարձով են տրվում և այլն։

III

Հողը Լժան գնահատելով — կալուածատէրն մեծ վնաս է հասնում, ասում են ամեն կողմից։ Զարմանալի է, որ այդ ցաւակցութիւնը յայտնվում է կալուածատիրոջ վերաբերմամբ։ Նրա մասին հոգսը շատերին դրաւեցնում է մեր աւօրեայ քաղաքի ծանօթներից։ Ինչու մի և նոյն ժամանակ մտքի չէ գալիս և մեր խեղճ գիւղացին։ Ինչու ուրախութեան աղաղակը այնքան բարձր չէ, որ խլացնէր կալուածատիրական լալականներին։ Եւ ինչ ուրախութիւն կարող է զգալ մի վաճառական, որ երբէք չը գիտէ թէ ինչ բան է էապէս մասնակից լինելը ընդհանուր ժողովրդական բարօրութեան և զարգացման բաւականին թանգ գնով։ Բայց զարունքից հանգամանքները փոփոխութիւն ստացան, ամեն տեղ հացաբոյսերը սկսեցին կանոնաւոր աճել և առատ հունձեր խոստանալ։ Հացավաճառների յոյսերը չարդարացան—նրանց ահագին պաշարները աւելորդ դուրս եկան և նրանցից ոչ հաց ստացածները մինչև անգամ վախեցան վնաս կրելուց։

Հացավաճառները վախենալով մի այսպիսի չարիքից, ջուրը բացվելուն պէս իսկոյն ուղարկեցին իրանց գործակատարներին հարաւային նահանգները ճիշտ տեղեկութիւններ ժողովելու համար։ Ահա գործակատարները քննել—նայել են և յետ են դառնում իրանց տէրերի մօտ. չոգենաւը մօտիկանում է Իրիվնակ քաղաքին. հացավաճառները դուրս են թափվել վագոնի ափը և սպասում են չոգենաւին՝ թէ ինչ լուր է բերել նրանց համար։ Գեռ չոգենաւը չէ մտնել նաւահանգիստին, անհամբեր վաճառականը բարձրաձայն կանչում է գործակատարին հեռուից։

—Հը. ինչ է, ինչ լսացար։

—Բանը վատ է, պատասխանում է գործակատարը տխուր ձայնով։

—Ինչպէս թէ վատ է, միթէ ամեն տեղ առատութիւն է։

—Ամեն տեղ։

—Եւ միթէ ոչ մի տեղից յոյս չը կայ։

—Ոչ մի տեղից, պարոնս, ամեն տեղ էլ առատ հունձ են սպասում։

Եւ այդպէս մերձաւորաբար խօսում են և միւս հացավաճառները իրանց գործակատարների հետ, իրանց կողմից անկեղծաբար վշտանալով տարվայ առատութիւնից։

Հասկանալի է այժմ թէ որչափ կարող են աղաւաղվել մարդկային հասկացողութիւնները և բարոյական տրամադրութիւնը նայելով թէ ինչ տեսակ շահեր է մարդ պատռում. հասնիմատ ազգային ժողովրդական ընդհանուր օգուտներին՝ թէ ընդհակառակը։

Ինչ յարաբերութիւն ունեն ասածներս կալուածական խնդրի հետ, գուցէ հարցնէ ընթերցողը։— Այն յարաբերութիւնը, որ և կալուածական խնդրում մի և նոյն սխալ, միակողմանի և վնասակար դատողութիւններ են գործ դրվում Ականջ դրէք դուք Երևանի կալուածատէրերին և յետոյ ճշմարտութեան և արդարութեան համար մտածեցէք։ Գտնէ ես առիթ ունեցայ ծանօթանալու կալուածատիրական այդ տրամադրութեան հետ։ Կալուածատէրը մինչև անգամ անմտութիւն էր համարում գիւղացու վրա մտածելն անգամ. նա մտերիմ կերպով հրաւիրում էր մի ծանօթ ուսանողի զառնալ հայրենիք և պաշտպանել կալուածատէրերի առաջարկութիւններ։ Եւ այդպիսի գործը քիչ էր մնում, որ անուանէր հայրենասիրութիւն, ազգասիրութիւն։ —Այո. և Իրիվնակի հացավաճառը հասաւ այն տեղը, որ ամբողջ երկրի առատութիւնը— անվանեց թշուառութիւն և ի հարկէ շատ ուրախ կը լինէր, եթէ սովի արհաւիրքը սաստկանային էլ աւելի և նա կարողութիւն ունենար աւելի թանգ ծախել իր ժողոված հացը։ Երևանի կալուածատէրը զարմանում էր տերութեան մի քանի կարգադրութիւնների վրա կալուածական խնդրի վերաբերմամբ և չէր կարողանում բմբռնել ոչ մի կերպով, որ ամբողջ ազգաբնակութեան շահերը աւելի բարձր են և կարևոր, քան առանձին անհատներինը։ Եւ իւրաքանչիւր բոլոր հասարակ էր թշնամութիւն նրա դէմ, ուստի և հայրենիքի դէմ, և այսպիսի վարմունքը համարում էր տերութեան գործիք լինելու ցանկութեան հետևանք...

Բայց տեսէք այժմ ինչ նոր լոյս է ծագում այս հետևեալ մի քանի տողերից, որ մասնաւոր նամակից հանում ենք այստեղ։ Նամակը գրած է Շուշու մօտից, հայ գիւղացուն փոքր ի շատ հասկացող մի մարդ։ Ահա նրա իսկական խօսքերը։ «Մեզանում տերութեան կողմից մոցնվում է այժմ մի բարերար կարգադրութիւն մեր գիւղացիների վերաբերմամբ— նրանց հողաբաժինները յետ գնել տալը կալուածատիրոջից։ Կարգադրութիւնը վերին ատիճանի խելացի է, գիները շատ չափաւոր։ Ոռոգանվող և պարտիզային հողերը գնահատված են դեսեատինը 26 բուբլի, իսկ չոռոգանվողները 17 բուբլի և պակաս։ Մի խօսքով դա մի մեծ բարիք է գիւղացիների համար։»

Ինչպէս ասացինք, գիւղացիներ ամենքն էլ ուրախ են։ Ինչ է նշանակում հասկանալ ժողովրդի ընդհանրութեանը